

**ՀԱՐԿԱՑԻՆ ԲԵՌԻ ՉՆԱԳԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ
 ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Տնտեսության զարգացման գործում, ակնհայտորեն, չափազանց կարևոր դեր ունի երկրի հարկային համակարգը, որը պետք է առավել բարենպաստ պայմաններ ստեղծի տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման, ներդրումային միջավայրի բարելավման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման, պետական եկամուտների հավաքագրման և տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման համար: Այս առումով, խիստ կարևորվում է հարկային բեռի հավասարաչափ բաշխման խնդիրը, որն անհրաժեշտ է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Այն, ըստ էության, իրենից ներկայացնում է պետության կողմից մատուցվող հասարակական բարիքների մենաշնորհային գին՝ հանդես գալով որպես քանակական չափման հաշվարկային ցուցանիշ: Պետությունը, հանդիսանալով հասարակական բարիքների միակ արտադրողը և պետական ծախսերի իրականացման միջոցով գոյություն ունեցող պահանջարկի բավարարողը, ձգտում է ձևավորել հարկման առավել բարձր մակարդակ, ինչպես նաև ապահովել հարկային մուտքերի աճի բարձր տեմպեր և ծավալներ: Հարկատուները, որպես պետական ծառայությունների «հարկադրված գնորդներ», շահագրգռված են հասարակական բարիքներ ձեռք բերել (հատկապես սոցիալական բնույթի) նվազագույն չափով հարկերի վճարման պայմաններում: Հարկ է նկատի ունենալ, որ շահերի նման հակադրությունը զարգացման գրեթե բոլոր փուլերում էլ գոյություն ունեցել է: Ընդ որում, նման իրավիճակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պետական ծառայությունների շուկան խիստ յուրահատուկ է այն առումով, որ հասարակական բարիքների արժեքը կարող է գնահատվել միայն պետական ծախսերի միջոցով, իսկ «գնագոյացումը» կրում է մենաշնորհային բնույթ և տեղի է ունենում պետության կողմից զանձվող պարտադիր հարկային վճարումների միջոցով: Հարկատուները պարտավոր են օրենքով սահմանված կարգով և չափով վճարել հարկեր անգամ այն դեպքերում, երբ համաձայն չեն դրանց չափի, հարկային դրույքաչափերի և վճարման այլ պայմանների հետ: Այդ խնդիրը նրանք փորձում են լուծել տարբեր եղանակներով, որոնցից առավել տարածված է եկամուտների թերհայտարարագրման միջոցով հարկերի վճարումից խուսափումը, ինչի արդյունքում կրճատվում է պետության տրամադրության տակ կենտրոնացվող ֆինանսական ռեսուրսների առաջարկը: Մյուս կողմից, պետությունը ևս շահագրգռված չէ հարկման խիստ բարձր մակարդակի ձևավորման մեջ, քանի որ այն նվազեցնում է առաջիկայում պետության տրամադրության տակ ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման հնարավորությունները: Ըստ էության, սոցիալ-տնտեսական տարբեր գործընթացների, ինչպես նաև պետության և հարկատուների շահերի բախման արդյունքում ձևավորվում է հարկային բեռի հավասարակշռված մակարդակը, որի հիմքում ընկած է պետության գործառույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հավաքագրումը:

Հարկ է նշել, որ պետական ծառայությունների մենաշնորհային շուկան ծնում է որոշակի սուբյեկտիվիզմ և խոչընդոտում է հավասարակշռված հարկային բեռի ձևավորման օբյեկտիվ գործընթացին: Դա հիմնականում դրսևորվում է հարկման բարձր մակարդակի ձևավորման տեսքով: Ընդհանուր առմամբ, պետք է միմյանցից տարբերակել հաշվարկված և փաստացի վճարված հարկերի գծով բեռը, որոնք շատ դեպքերում միմյանցից որոշակիորեն տարբերվում են: Առաջինն իրենից ներկայացնում է պետության կողմից ֆինանսական ռեսուրսների նկատմամբ տվյալ ժամանակահատվածում գոյություն ունեցող պահանջարկը, իսկ երկրորդը՝ հարկման ենթակա աղբյուրների գծով առաջարկը, որը, պայմանականորեն կարելի է համարել հավասարակշռված հարկային բեռ: Նման տարբերակման պատճառն այն է, որ առաջին՝ հարկատուները սեփական ֆինանսական ցածր հնարավորությունների և օրենսդրու-

թյամբ սահմանված բարձր հարկերի պատճառով շատ դեպքերում ի վիճակի չեն դրանք ամբողջությամբ վճարել և երկրորդ՝ հարկատուները ցանկություն չունեն վճարել սահմանված չափով հարկերը, քանի որ դրանք, իրենց կարծիքով, բարձր են կամ, այլ կերպ ասած, հասարակական բարիքների գինը չափազանց բարձր է: Նման իրավիճակում հարկատուների մոտ առաջանում են բյուջեի հանդեպ պարտավորություններ, կամ էլ, խորանում են հարկերի վճարումից հարկատուների խուսափելու գործընթացները: Ակնհայտ է, որ խիստ բարձր հարկային բեռի պայմաններում հարկատուների ֆինանսական վիճակը վատթարանում է, և կրճատվում են բյուջետային եկամուտները, քանի որ հարկատուները զանգվածային կերպով սկսում են թաքցնել հարկման օբյեկտը: Միևնույն ժամանակ, հարկերի նկատմամբ պետության պահանջարկի կրճատումը կարող է բերել հարկատուների ֆինանսական ռեսուրսների ավելացմանը: Խնդիրը կայանում է այնպիսի մակարդակի ձևավորման մեջ, որ, մի կողմից, պետության կողմից իրականացվող գործառույթների որակը չվտանգվի, և մյուս կողմից, տնտեսվարող սուբյեկտների գործունեության արդյունքում առաջացող հարկման աղբյուրները չսահմանափակվեն: Քանի որ հարկային բեռը կարելի է դիտարկել որպես պետության կողմից մատուցվող ծառայությունների գին, ապա շատ դեպքերում հարկատուները պոտենցիալ հարկային բեռի համապատասխանությունը պետության կողմից մատուցվող և իրենց կողմից սպառման ենթակա պետական ծառայությունների որակի և քանակի հետ որոշում են պարզ համեմատության միջոցով: Դա իրականացվում է անուղղակի ձևով, ելնելով բյուջետային ծախսերի ծավալից, որոնց վերաբերյալ տվյալները կարող են սահմանափակ լինել կամ էլ դրանք կարող են ուղղակիորեն չընկալվել որպես սպառվող ծառայությունների գին: Հենց այդ հանգամանքն էլ որոշիչ դեր է խաղում հարկատուների տնտեսական վարքագծի ձևավորման, նրանց կողմից եկամուտների ամբողջական կամ մասնակի հայտարարագրման և, վերջին հաշվով, հարկերի վճարումից խուսափելու գործում: Մասնավորապես սկանդինավյան որոշ երկրներում, չնայած այն հանգամանքին, որ սահմանված է խիստ բարձր հարկային բեռ, այն հարկատուների կողմից չի ընկալվում որպես սեփական եկամուտների չհիմնավորված սահմանափակում: Վերջիններս պատրաստակամ են կատարելու սեփական հարկային պարտավորությունները, քանի որ տնտեսական օգուտների և սոցիալական բարիքների տեսքով զգում են պետության աջակցությունը:

Ակնհայտ է, որ հարկային բեռի օպտիմալ մակարդակի ձևավորումը պետության կարևոր խնդիրներից մեկն է, քանի որ դրանով է մեծապես պայմանավորված, մի կողմից, տնտեսության բնականոն գործունեությունը, և մյուս կողմից, պետության գործառույթների պատշաճ իրականացումը: Հարկային բեռի օպտիմալ մակարդակը, նախ և առաջ, ենթադրում է հարկային հարաբերությունների բոլոր մասնակիցների շահերի հաշվեկշռվածության, ինչպես նաև պետության և հարկատուների եկամուտների ավելացման հնարավորությունների ապահովում: Հարկատուները, կատարելով իրենց հարկային պարտավորությունները, պետք է ստանան համապատասխան քանակի և որակի հասարակական բարիքներ: Հակառակ դեպքում նրանց մոտ կձևավորվի անվստահության մթնոլորտ պետության հանդեպ, ինչն էլ, իր հերթին, կնպաստի հարկերի վճարումից խուսափելուն: Ըստ էության, հարկային օպտիմալի բեռի մակարդակը տարբեր երկրների զարգացման տարբեր ժամանակահատվածների կտրվածքով խիստ տարբեր է: Հարկային բեռի որոշակի մակարդակը, որը տվյալ երկրի համար զարգացման տվյալ փուլում կարող է ներկայանալ որպես օպտիմալ, այլ երկրներում կարող է լինել խիստ բարձր կամ ցածր: Բացի այդ, գոյություն ունեն հարկային բեռի ստորին և վերին մակարդակներ, որոնք նույնպես տարբեր երկրների համար խիստ անհատական են: Ըստ էության, դրանք կարևոր են հարկային բեռի օպտիմալ մակարդակի հաշվարկման համար: Հարկային բեռի ստորին մակարդակը ցույց է տալիս այն նվազագույն սահմանը, որից ներքև պետությունը չի կարող բավարարել հասարակական բարիքների արտադրության գծով երկրում ձևավորված պահանջարկը: Ակնհայտ է, որ նման իրավիճակը չափազանց վտանգավոր է պետության և հասարակության բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից: Սակայն պակաս վտանգավոր չէ նաև այն իրավիճակը, երբ հարկային բեռը գերազանցում է

վերին մակարդակը, ինչին հետևում է պետության և տնտեսվարող սուբյեկտների եկամուտների անկումը, հարկերի վճարումից խուսափելու գործընթացների զանգվածային տարածումը և երկարաժամկետ կտրվածքով տնտեսական անկման խորացումը:

Ընդհանուր առմամբ, տնտեսության մեջ հարկային բեռի բաշխման երկու հիմնական մոտեցում գոյություն ունի, որոնք համապատասխանաբար հիմնված են ստացված բարիքների (օգուտների) և վճարունակության սկզբունքների վրա: Առաջինը ենթադրում է, որ ձեռնարկատերերը և տնային տնտեսությունները պետության կողմից մատուցվող ծառայությունները պետք է ձեռք բերեն այնպես, ինչպես մյուս սպրանքների և ծառայությունների դեպքում: Հետևաբար, հարկային բեռի բաշխումը հասարակության անդամների միջև պետք է իրականացվի՝ ելնելով նրանց կողմից սպառվող հասարակական բարիքների ծավալից: Ըստ էության, այս սկզբունքի կիրառման դրսևորումներից է նպատակային հարկերի սահմանումը (բնապահպանական հարկեր, ճանապարհային հարկեր և այլն), որոնք ամրակցվում են կոնկրետ ծախսերի իրականացմանը: Մակայն շատ դեպքերում գործնականում հնարավոր չէ պարզել վճարված հարկերի համարժեքությունը սպառված հասարակական բարիքների (մասնավորապես, ազգային անվտանգություն, պաշտպանություն, հասարակական կարգի պահպանություն և այլն) արժեքին: Նման դեպքերում կիրառվում է տարբեր սուբյեկտների, տնտեսության ոլորտների և ճյուղերի միջև հարկային բեռի հավասարաչափ և համամասնորեն բաշխման սկզբունքը: Այն դրսևորվում է ընդհանուր հարկերի սահմանման միջոցով, որոնք ամրակցված չեն կոնկրետ ծախսատեսակների: Չնայած այն հանգամանքին, որ վերոհիշյալ սկզբունքները միմյանցից տարբերվում են, սակայն գործնականում միշտ էլ հաշվի առնվում է վճարունակության սկզբունքը, որի համաձայն հարկային բեռի հիմնական ծանրությունը պետք է կախվածության մեջ դրվի ֆինանսական հնարավորություններից: Վճարունակության սկզբունքն ընկած է այն երկրների հարկային համակարգերի հիմքում, որոնցում գերակշիռ տեղ են զբաղեցնում ուղղակի հարկերը: Այս մոտեցումը հիմնականում դրսևորվում է ուղղակի հարկերի գծով չհարկվող նվազագույնի սահմանման և պրոգրեսիվ դրույքաչափերի կիրառման միջոցով: Դրանով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ անուղղակի հարկերի սահմանման ժամանակ ևս պետք է հաշվի առնել հարկատուների վճարունակությունը: Այսպիսով, ըստ վճարունակության սկզբունքի հարկային բեռի բաշխման մոտեցումը տեսականորեն ներկայանում է որպես հիմնավորված և արդարացի: Մակայն դրա գործնական կիրառման պարագայում ծագում են մի շարք հիմնախնդիրներ հարկային դրույքաչափերի տարբերակման, պրոգրեսիվ սանդղակի սահմանման, չհարկվող շեմի որոշման և նմանատիպ այլ հարցերի հետ կապված: Այդ հանգամանքով պայմանավորված էլ հարկային բեռի բաշխման խնդիրը տարբեր երկրներում լուծվում է տարբեր ձևով, ելնելով ինչպես նշված մոտեցումների համադրումից, այնպես էլ տնտեսական իրավիճակից, քաղաքական ուժերի հարաբերակցությունից, պետության տրամադրության տակ կենտրոնացվող ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությունից և այլ խնդիրներից: Ըստ օգուտների հարկային բեռի բաշխման մոտեցման համաձայն, հարկատուների կողմից վճարված համախառն հարկային վճարումների և նրանց կողմից սպառվող հասարակական բարիքների արժեքները պետք է համապատասխանեն միմյանց, ինչը հնարավորություն կտա հարկման հավասարությունը և արդարացիությունը շաղկապել պետական ծախսերի կառուցվածքի հետ: Վճարունակության սկզբունքի դեպքում նման կապ գոյություն չունի, սակայն այն պարտադրում է հարկատուներին սեփական եկամուտներից բյուջե վճարել իրենց արդարացի բաժինը՝ ըստ ֆինանսական հնարավորությունների:

Ընդհանրապես հարկային բեռի հետ կապված խնդիրները դիտարկելիս անհրաժեշտ է քննարկել երկու՝ մակրո և միկրո տեսանկյուններից. Առաջինը ցույց է տալիս բյուջետային համակարգ ներգրավվող հարկային մուտքերի հարաբերակցությունը համախառն ներքին արդյունքին: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք. այս դեպքում հաշվարկման համար հիմք է ընդունվում փաստացի հավաքագրված հարկային եկամուտների ծավալը: Մակայն իրական հարկային բեռի հաշվարկման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է դիտարկել ոչ թե փաստացի հավաքագրված, այլ հաշվարկված հարկային պարտավորու-

բյուռների ծավալը, քանի որ դրանք շատ դեպքերում կարող են միմյանցից տարբերվել: Միկրոնակարդակում հարկային բեռը ցույց է տալիս ընդհանուր տնտեսական շրջանառության մեջ տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերի բաժինը: Բացի նշվածներից, անհրաժեշտ է տարբերակել նաև բնակչության կտրվածքով հարկային բեռը, որը հիմնականում դրսևորվում է անուղղակի հարկերի պարագայում, երբ հարկային բեռը տեղափոխվում է վերջնական սպառողների (հիմնականում բնակչության) վրա: Պետք է նշել, որ տնտեսվարող սուբյեկտների և բնակչության կտրվածքով հարկային բեռի գնահատման առումով գոյություն ունեն լուրջ տարբերություններ: Տնտեսվարող սուբյեկտների գծով հարկային բեռի վերլուծության համար, որպես կանոն, օգտագործվում են տնտեսական գործունեության այնպիսի հիմնարար ցուցանիշներ, ինչպիսիք են հասույթը, շահույթը և աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները: Սակայն հասույթն իր մեջ ներառում է նաև նյութական և դրանց հավասարեցված մի շարք ծախսեր, ինչից ելնելով չի կարելի այն դիտարկել որպես հարկերի վճարման մշտական աղբյուր: Հետևաբար, որպես նման ցուցանիշ է հանդես գալիս նոր ստեղծված կամ ավելացված արժեքը, որն էլ հանդիսանում է հարկման հիմնական բազա:

Խնդիրն առավել բարդ է բնակչության համար հարկային բեռի հաշվարկման դեպքում: Մովորաբար, ֆիզիկական անձանց հարկային բեռը նույնականացվում է եկամտահարկի և բնակչության կողմից սեփական եկամուտներից ուղղակիորեն վճարվող այլ հարկերի գծով բեռի հետ: Սակայն դա չի կարող տալ հարկային բեռի իրական պատկերը, քանի որ անուղղակի հարկերի գծով հարկային բեռը ևս փոխանցվում է վերջնական սպառողներին, ինչն իր դրսևորումն է ստանում բնակչության կողմից մի շարք ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ:

Նման տարբերակում իրականացվում է նաև հարկային պլանավորման կտրվածքով: Ընդհանուր առմամբ, հարկային համակարգի արդյունավետ գործունեության կարևոր նախապայմաններից է հարկային պլանավորման արդյունավետության բարձրացումը, որը ֆինանսական պլանավորման և կանխատեսման կարևոր բաղկացուցիչներից է: Հարկային պլանավորման խնդիրները նույնը չեն և տարբերակվում են ըստ կառավարման օբյեկտի: Հարկային պլանավորումն իրականացվում է մակրո և միկրոնակարդակներով: Մակրոնակարդակում հարկային պլանավորման ընթացքում իրականացվում է ամբողջ երկրի կամ նրա առանձին տարածաշրջանների կտրվածքով հարկային մուտքերի կանխատեսում և պլանավորում: Միկրոնակարդակում հարկային պլանավորումն իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների կտրվածքով՝ վերջիններիս հարկային պարտավորությունների կրճատման նպատակով: Ըստ էության, հարկային պլանավորումը կանխատեսումային ցուցանիշների վրա հիմնված գործընթաց է, որի նպատակը մուտքագրվող և ելքագրվող հարկային հոսքերի կառուցվածքի, կազմի և ծավալի որոշումն է պետության և տնտեսվարող սուբյեկտների կտրվածքով: Ինչպես արդեն նշվեց, հարկային պլանավորման նպատակները և խնդիրները տարբեր են, ինչը օբյեկտիվ է և տրամաբանական: Պետությունը ձգտում է պլանավորել առավել մեծ ծավալի հարկային եկամուտներ պետական բյուջեի և տարբեր արտաբյուջետային հիմնադրամների համար, իսկ տնտեսվարող սուբյեկտները՝ օրենսդրորեն սահմանված մեխանիզմների և մեթոդների կիրառման միջոցով փորձում են հնարավորինս նվազեցնել սեփական հարկային պարտավորությունները:

Պետական հարկային պլանավորման նպատակը իշխանության տարբեր մակարդակների ծախսային պարտավորությունների պատշաճ ապահովումն է ըստ վերջիններիս ծավալի, կազմի և կառուցվածքի՝ միասնական պետական տնտեսական, ֆինանսական, սոցիալական և հարկային քաղաքականության շրջանակներում: Ակնհայտորեն, հարկային պլանավորման գործընթացում առանցքային դերակատարում է վերապահված տեղեկատվության հավաքագրման և մշակման վերլուծական փուլին, որին հաջորդում է դրանից բխող համապատասխան կառավարչական որոշումների ընդունման փուլը:

Ընդհանուր առմամբ, ինչպես մակրո, այնպես էլ միկրոնակարգակներում հարկային պլանավորումը լինում է ռազմավարական և մարտավարական: Ակնհայտ է, որ առավել ցանկալի արդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ է սերտ փոխկապակցվածություն ապահովել դրանց միջև, քանի որ հակառակ պարագայում դրված խնդիրների լուծումը կարող է վտանգվել: Ռազմավարական հարկային պլանավորումն իրենից ներկայացնում է ռազմավարական նպատակների ձեռքբերմանն ուղղված գործընթաց, որի հիմնական խնդիրը պետության տրամադրության տակ կենտրոնացվելիք ֆինանսական ռեսուրսների կանխատեսումն ու պլանավորումն է: Ըստ էության, տվյալ խնդրի լուծումը պետք է ապահովվի մարտավարական հարկային պլանավորման միջոցով, որը, ի տարբերություն առաջինի, ընդգրկում է առավել կարճ ժամանակահատված և ուղղված է ռազմավարական նպատակների իրականացման ապահովմանը: Տնտեսավարող սուբյեկտների կտրվածքով ռազմավարական և մարտավարական հարկային պլանավորումը որոշակիորեն այլ դրսևորումներ ունի: Նախ և առաջ պետք է նշել, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, անցումային տնտեսությամբ երկրներում և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում, ռազմավարական հարկային պլանավորում տնտեսավարող սուբյեկտների կողմից գրեթե չի իրականացվում: Դա պայմանավորված է օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններով, իրականացվող հարկային քաղաքականության կանխատեսելիության ցածր մակարդակով, տնտեսական կոնյունկտուրայի անկայունությամբ և այլ գործոններով: Գրեթե նույն խնդիրներով պայմանավորված, մարտավարական հարկային պլանավորումը ևս չի գտնվում ցանկալի մակարդակի վրա: Նշված խնդիրների լուծումը հիմնականում իրականացվում է իրավիճակի թելադրանքով, ինչը, ակնհայտորեն, նվազեցնում է հարկային պլանավորման արդյունավետությունը:

Ամփոփելով, պետք է նշել, որ հարկային բեռի գնահատման և դրա հավասարաչափ բաշխման հարցերը հարկային քաղաքականության կատարելագործման և դրա արդյունավետության բարձրացման առանցքային ուղղություններից են: Ընդ որում, դրա կարևորությունը պայմանավորված է ոչ միայն բյուջետային եկամուտների համալրման անհրաժեշտությամբ, այլ նաև տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման հրամայականով: